



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2767

26
D-90

1901

Printed in Turkey

4-46

ԿՈՆԴԱԿ

ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ



10044

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹՆՈՍԵԱՆ

1901

26
0-90

2010

պր. 58

26
090

4

Printed in Turkey

5

ԿՈՆԴԱԿ

83

ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՍՅԱՆ

1901

11954



**ՄԱՂԱՔԻԱ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ
ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐԾՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ
ԱՐԲԵՊԻՍԿՈՎՈՍ Կ. ՊՈԼՍՈՆԵ ԵՒ ՊԱՏՄԱՐԻ ԶԱՅՈՑ
ԹՈՒՐԲՈՅ, Սիրեցեալ գործակցաց մերոց ի Քրիստոս,
բարեխրատ Քարոզչաց, բարեկարգ Աւագերիցանց, և
բարեշնորհ Քահանայից, և Սիրեցեալ որդւոց մերոց բա-
րեջան Թաղական խորհրդոց և բովանդակ բարեսէր Ժո-
ղովրդեան Մեծի Վիճակիս Կոստանդնուպոլսոյ, ողջոյն
և օրհնութիւն արբաւանդ:**



91
39

ՄԱՐԳԱՅԻՆ կենաց և ընկերական կենցաղին առաջին տարրը ճանչցուած է անհակառակ ամուսնական կապը, որ հաւասարապէս առարկայ եղած էր և է ամեն օրինաց և կարգաբարձութեանց, որովհետեւ իբրև անհրաժեշտ պայման կը մտնէ ամեն օրինական կազմակերպութեանց մէջ: Ամուսնութիւնը ընական գործողութեանց կարգին մէջ՝ ընական օրի-

նաց ազգեցութիւնը կրելէ ետքը, կրօնական օրինաց ենթարկուեցաւ իբր բարոյական մի դործ, և քաղաքական օրինաց պարունակէն ալ դուրս չմնաց իբր ընկերական կենաց կազմական միջոց, իսկ Քրիստոնէական երկնապարզե Ս. կրօնիս մէջ նուիրական կերպարան զգեցաւ և խորհրդական բարձրութեամբ պատուուեցաւ, որպէս զի հաւատացեալ ժողովրդեան սրբութեան և ուղղութեան և բարօրութեան առաջնորդէ հղօրեղապէս : Այս նպատակով Ս. Եկեղեցին Քրիստոսի, հոգեւոր կարգերով և կանոններով, պայմաններով և ձէսերով պատեց զայն անդատին ի սկզբանէ, իւր արթուն և բարեւէր հսկողութեան ներքեւ առաւ անոր ամեն մասերը, բարեպաշտական և նուիրական պարագայներով զարգարեց ու զօրացուց անոր կատարումը :

Նաև մերս Ուղղափառ և Առաքելական Ս. Եկեղեցի, հաւատարիմ աւանդապահ նախնի կարգաց և կանոնաց, իւր ծիսական տրամադրութեանց մէջ ամպիսի շքեղ և նշանաւոր արարողութիւններ հաստատեց ամուսնական օրհնութեան և խորհրդական պոսկազրութեան համար, որ շատ ստորին չեն մնար անոնցմէ՝ որովք նոյն ինքն Եկեղեցւոյ պաշտօնեայք կը կոչուին և կը ձեռնադրուին : Մաշտոցին հնաւանդ կանոնները կը ցուցնեն թէ Պսակի օրհնութիւնը պիտի կատարուի ի մէջ Եկեղեցւոյ, առաջի Սրբոյ Խորանին և ի ժամ մատուցման Ս. Պատարագի, որ այդ առթիւ յատուկ սրբաբանութիւններ և երգեր և ընթերցուածներ կուսնանայ, փոխանակ աւուր տօնական պատշաճին : Այդ արարողութիւններ և պայմաններ տեղ տեղ ամբողջարար և շատ տեղ գրեթէ ամբողջարար կը կատարուին մինչև ցայսօր, այլ ուր առաւել տարբերութիւններ մուծուեր են, այն ալ Մայրաքաղաքս է, որ թէպէտ ի բազումս զարգացման և բարեկարգութեան առաւելութիւններով կը պարծենայ, այլ ի մասինս նշանաւոր զանցառութիւններու, չըսեմք զեղծումներու, մեղադրանաց ներքեւ ինկած կը գտնուի :

Ժամանակի և տեղւոյ դժուարութիւնք ներելի նկատել տուած են երբեմն, որ եկեղեցւոյ Խորհուրդ մը պատահարար հնար լինի եկեղեցիէ դուրս ալ պաշտուիլ . այլ ինչ որ եկե-

ղեցական օրինաց հակառակ՝ յոյժ բացառիկ և անհրաժեշտ պարագայից առջեւ կրնար արդարանալ, Պսակի խորհրդոյն մէջ հետզհետէ առաւել ընդարձակութիւն սկսած է ստանալ, և դիւրութեան և հանգստեան վաստը՝ օրինաւորութեան և պատշաճողութեան վրայ նախադասուելով, գրեթէ սովորութիւն դարձած է որ Մայրաքաղաքիս մէջ ընդհանուր կերպով տուներու մէջ խորհրդական Ս. Պսակն օրհնուի, և խրախճանաց սրահներու մէջ ծիսական սպասք երեւնան և հոգեւորական պաշտամունք կատարուին, և արտաքին ու աշխարհական հանդիսութեանց կերպարան տրուի սոյն նուիրական արարողութեան : Եւ իբրև թէ կատարեալ ազատութիւն տրուած լինէր այդ մասին, մինչև իսկ ընդհանուր սրահներ և պանդոկներու մէջ զուարճութեանց դահլիճներ Պսակի արարողութեան և ամուսնական օրհնութեան համար յատկապէս վարձուիլ և գործածուիլ սկսան :

Սակայն եկեղեցական իշխանութիւնը երբէք չլուեց այդ զանցառութեան դէմ և Պսակի կոնդակը միշտ յիշեցուց, թէ «Շատ աղէկ կըլլայ եթէ պսակը Ս. Եկեղեցւոյ մէջ կատարուի և ոչ տուները, զիսնայով որ միայն հարկեցուցիչ պատճառաւ վերջին ժամանակներս տուները Պսակ կատարելու սովորութիւնը մտած է միայն ի կոստանդնուպոլիս, և դեռ գաւառները միշտ եկեղեցւոյ մէջ կը կատարեն այս սուրբ խորհուրդը, ինչպէս որ մեր երանեալ նախնիք սահմանած են» : Եւ 1875 տարւոյ ապրիլ 25ին Խառն Ժողովով հաստատուած հարսանեկան կանոնադիրը՝ ԺԳՐՊ յօդուածով բացարձակապէս հրամայեց, թէ «Պսակը ըստ կանոնաց Եկեղեցւոյ պիտի կատարուի միշտ յեկեղեցւոյ», և ԺԳՐՊ յօդուածով վեց ամիսէն մինչև մէկ տարի քահանայադործութենէ զրկում հաստատեց առանց Պատրիարքարանի յատուկ և գրաւոր հրամանին տան մէջ պսակ կատարող եկեղեցականին դէմ :

Արդ տեսնելով և նկատի առնելով այդ նախընթացները, տեսնելով և նկատի առնելով եկեղեցական կանոնաց և ծիսակատարութեանց խիստ պահանջները, նկատի առնելով պատահական զեեծմանց ընդարձակուիլը, նկատի առնելով խիթալի դժուարութեանց վերցուիլը և առձեռն դիւրու-

թեանց աւատանալը , և առաջի աչաց ունենալով Պատ. կրօնական ժողովոյ իր Յուլիս Յի նստին մէջ այդ հիմամբ առած որոշումը , կը հրամայեմք և կը պատուիրեմք որ այսուհետեւ Ս. Եկեղեցիներէ դուրս որ և է ընտանեկան կամ մասնաւոր կամ հրապարակային յարկի մէջ չկատարուի և չօրհնուի Ս. Պատկի խորհուրդն ու արարողութիւնը , այլ միշտ և յամենայնի պահուի և պահպանուի ծիսական կարգաւորութիւնը , և այդ նուիրական գործողութիւնը Եկեղեցւոյ մէջ կատարուի , որպէս զի թէ՛ նորապսակներն , թէ՛ իրենց պարագայք և թէ՛ հաւատացեալ ժողովուրդը զգալի կերպով հասկնան և թափանցեն խորհրդոյն և գործոյն հոգեւոր նշանակութեան , օգտուին Եկեղեցւոյ հաստատած չորհրդալիս արարողութիւններէն , և ազդուին ինչպէս որ պէտք է մեր Ս. Կրօնին և Ս. Աւետարանին աւանդած պատգամներէն :

Այս առթիւ կ'ուզէինք և կը փափագէինք ամուսնական կենաց սրբութեան , մեծութեան , օգտակարութեան , ընդհանուր հարկին , մերձաւորութեան աստիճաններուն , և անլուծածանելիութեան պայմանին , և այլ կանոնական պահանջներուն վրայ կարեւոր բացատրութիւններ տալ . այլ որովհետեւ այդ ամենը կրնայ շատ հեռուն մեզ տանիլ և շատ ընդարձակ գրուածոց դուռ բանալ , հետեւաբար այս անգամուան համար լոկ նշանադրութեան և պսակադրութեան մասին քանի մը կարեւոր և օգտակար կարգադրութիւններ յիշատակեմք և անոնց գործադրութեան մասին լուսարանութիւններ յաւելումք :

Ա. Ծխատէր քահանայից արգիլեալ է որ և է առթիւ կամ պատճառով նշան օրհնել կամ Պանպանեացով հաստատել երկուց կողմանց մէջ հաստատուած խօսքկապը , որ պիտակարար նշանադրութիւն կը կոչուի : Բուն նշանադրութիւնը այն է՝ որ օրինական քննութիւններով և վկայութիւններով Պատրիարքարանի մէջ կը հաստատուի և կ'արձանագրուի և կ'օրհնուի , և օրինական վաւերականութիւն և զօրութիւն կ'ունենայ : Ընտանեկան շրջանակի մէջ կատարուած խօսքկապը երբէք օրինական ոյժ չունի , և քահանայից կ'արգիլ-

ուի պաշտօնական և կրօնական ձեւ տալ այդ անպաշտօն և ընտանեկան գործողութեան , որպէս զի որ և է թիւրիմացութեան կամ շիտիթութեան տեղի չարուի :

Բ. Յատկապէս կը պատուիրեմք երկու կողմերու ծնողաց և խնամակալաց , որպէս զի լոկ ընտանեկան խօսքկապով չաւարտեն փոփոխ խտտումը , այլ ամեն բան խմանալէն և պարզելէն յետոյ՝ փութան կատարել պաշտօնական նշանադրութիւնը Պատրիարքարանի մէջ , առանց յետաձգելոյ զայն մինչեւ պսակադրութեան օրը : Այս կերպով թէ՛ փոխադարձ ապահովութիւն և վստահութիւն կը գոյանայ , թէ՛ գործողութիւնը օրինական ոյժ կստանայ , և թէ՛ իրենք առաջի աշխարհի խնամութեան պայմաններուն վայելումը կունենան :

Գ. Նմանապէս կը յորդորեմք նշանադրութեան պսակադրութեան միջոցը տարապայման չերկարել , որ թէ՛ նշանելոց համար ծանր է և տաղտկալի , և թէ՛ երկու կողմերուն մէջ տարապարտ զրոյցներու և միջադէպներու առիթ , և թէ՛ ի զուր և ընդունայն ծախքերու դուռ : Թէպէտ քանի մի ամիսէ պսակելը գուլիլ է , այլ առ առաւելն վեցամսեայ միջոցը բաւական սեպուելու է : Ծխատէրներ պարտաւոր են այդ մասին հսկել և տարապարտ յապաղմանց առաջն առնուլ և ի հարկին Պատրիարքարանի տեղեկութիւն տալ , որպէս զի անտեղութեանց առիթ չարուի :

Դ. Նշանադրութեան ինչպէս նաեւ հրամանի առթիւ Պատրիարքարանի և ծխատէրներու վճարուելիք իրաւունքներու համար Պատրիարքարանը յատուկ ցուցակ մը կազմած է և ըստ այնմ պէտք է հատուցանել : Այս մասին հարկ կը սեպենք ազդարարել թէ Պատրիարքարանը կը դժուարանայ յոյժ՝ այդ իրաւունքներուն վրայ զիջողութիւններ ընել , ցորչափ կը տեսնէ որ միայն Պատրիարքարանի իրաւունքներուն վրայ խճճանքներ կը յերիւրուին , իսկ շատ մը աւելորդ և չապլ և նոյն իսկ անտեղի ծախքեր անխորհրդաբար կը կատարուին : Կը յիշեցնենք նաեւ թէ այսուհետեւ կամաւոր չէ երկու կողմերուն իրենց ուղած աստիճանով կամ թէ՛ հարկաւ իրարու հաւասար աստիճանով վճարել , այլ իւրաքանչիւր կողման կարողութեան աստիճաններուն համեմատութեամբ պիտի

առնուին նաեւ Նշանի և Հրամանի ըտր տուրքերը : Ասոնց ամենուն ցուցակը ի տես դրուած է Պատրիարքարանի Իրեւանատան մէջ :

Ե. Յատկապէս կը յանձնարարեմք ծխատէր քահանայից որ յիշեցնեն , և սիրայորդոր կ'ազդարարեմք փեսայացուաց և հարսնացուաց որ յիշեն , թէ ամուսնութիւնը զոր պիտի կատարեն արտաքին հաճոյական կամ շահադիտական գործողութիւն մը չէ , այլ կենաց ասպարէզին մէջ բարոյական ճգանց և պայքարի գործ մի է , որ իրենցմէ կպահանջէ նոյնչափ մտաց կորով որչափ սրտի գորով , և որուն ապագայ յաջողութեան համար պէտք ունին Աստուածային շնորհաց և Նախախնամութեան պարգեւաց : Այդ նպատակով է հաստատուած խորհուրդը , այդ նպատակին կը ծառային պաշտամունք և արարողութիւնք , իրենք ալ այդ հոգևով և զգացմամբ պէտք է պատրաստուին , և ստակադրութեան նախընթաց եօթնեկին մէջ Ապաշխարութեան և Հաղորդութեան Խորհուրդներով զորանան , և որչափ ժամանակին և գործերնին կը ներէ , բարեպաշտական և բարեգործական պարտքերնին լրացնեն , ազօթք ընեն և ողորմութիւն տան , և մանաւանդ իրենց ուրախութեան առթիւ կարօտեալները և խեղճերը ուրախացնելու պարտքը՝ ճանչնան իբր նուիրական պայման և իբր ամբողջացուցիչ մաս մը իրենց կատարելիք մեծ գործողութեան :

Զ. Պսակի օրհնութեան համար սովորական օրն և ժամն է այն եօթնեակներուն երկուշաբթի առտուն կամ ցերեկը , որոց կիրակիին առջեւ օրացոյցը հարաւնիւք բառը կը նշանակէ , այսինքն է պահոց և տէրունեաց չհանդիպող երկուշաբթիներ : Նոյն եօթնեակներուն երեքշաբթի և հինգշաբթի և շաբթ օրն ալ ներեալ է պսակ օրհնել , բայց լաւ է յառաջագոյն Պատրիարքարանի տեղեկութիւն տալ և պատճառը իմացնել : Ասոնցմէ դուրս արգիլեալ օրեր պսակ օրհնել ներեալ չէ երբէք :

Է. Պսակի օրհնութեան տեղն է ըստ կանոնաց և պիտի ըլլայ այսուհետեւ Եկեղեցին միայն , սովորաբար փեսային թաղին եկեղեցին , և երբեմն հարսնացուին թաղին եկեղեցին կամ թէ ուրիշ եկեղեցի մը , եթէ այդպէս աւելի յարմար

կամ աւելի դիւրին երեւի : Եկեղեցոյ մէջ պիտի կատարուի միայն Պսակի օրհնութեան կարգը : Նշանի օրհնութիւնը Պատրիարքանի մէջ կը կատարուի ժամանակին՝ աւելի կամ նուազ հանդիսութեամբ և նշանին վրայ օրհնութիւնը կրկնելու պէտք չկայ : Իսկ հալաւի օրհնութիւնը բարեպաշտական մաս մըն է , և իւրաքանչիւր կողման ծխատէրը պարզօրէն կը կատարէ զայն իւրաքանչիւրին տան մէջ կանուխ և կամ առջի օրէ , իսկապէս փեսայացուին և հարսնացուին հարսանեկան զգեստը օրհնելով՝ հագնելէն առաջ , և ոչ թէ լոկ դիւանոց մը կամ թէ կեղծ ծաղկի կտոր մը , որ բարեպաշտական նշանակութեան աւելի ծաղրելի հանգամանք մը կը զգենու : Հալաւի օրհնութիւնը եկեղեցոյ մէջ կատարուելիք արարողութիւնն չէ :

Ը. Փեսայացուին տունէն քանի մը անձեր իբր պատուիրակ հարսնացուին տունը կերթան և հարսնացուին տունէն գալիքներուն հետ հարսնաուի խումբը կը կազմեն և հարսը եկեղեցի կը տանին որոշեալ ժամուն , ուր պահ մը առաջ կը հասնի եւ փեսայն փեսաւէր խմբին հետ : Եկեղեցոյ ատեանը կսկսի արարողութիւնը «Նայեաց ի մեզ» շարականէն սկսելով : Խառն ժողովոյ 1875ի կանոնագիրը ձեռնատուութիւնը խրատներու վերջը կը թողու , իբր զի առաւել յարմար է որ հաւանութիւնները եւ խոստումները առնելէ ետքը խորհրդական ձեռնատուութիւնը կատարուի եւ ամուսնական կապը հաստատուի , եւ այդպէս ալ տեսնուած կայ հին ձեռագրիներու մէջ . մինչ Մաշտոցներու սովորական սպազրութիւնները խրատը ձեռնատուութեանէն ետքը կը դնեն . բայց որովհետեւ այդ վերջին եւ նուիրական պարագային «ոչ» պատասխանելու հնարաւորութիւնը եւ ազատութիւնը վերցուած չէ և օրինակն ալ տեսնուած է , ուստի նախադասելի կը գտնեմք և կը յանձնարարեմք ձեռնատուութիւնը խրատէն և խոստումներէն յետոյ կատարել և անմիջապէս յարել ժամամուտը : Իսկ նարօտի մասին ի դէպ է պահել տեղական սովորութիւնը :

Թ. Թագվերացի մասը ըստ հին սովորութեան տան մէջ պիտի կատարուէր և այն ալ երեք օր ետքը . բայց քանի որ

այլ եւս այդ երեքօրեայ յապաղումը չկայ եւ անմիջապէս թագ վերայնելու սովորութիւնը հարկաւոր դատուած է, ի դէպ է եկեղեցւոյ մէջ թագվերայն ալ աւարտել իր ամեն մասերով: Այլ եթէ թագվերացը յապաղելու փափագող գտնուի, արգիլեալ չէ զայն առանձին կատարել տան մէջ առանց հանդիսաւորութեան:

Ժ. Թէպէտ Մաշտոցը չյիշեր, այլ հաստատուն եւ հնաւանդ սովորութիւնը ընդունած է Պսակի օրհնութեան ատեն կնքահօր մը ներկայութիւնը, որ Ս. Խաչը կը բռնէ փեսային եւ հարսին գլխուն վրայ ձեռնտուութեան արարողութենէն ետքը: Քանի որ կնիքի խնդիր չկայ, բուն կնքահայր ալ չկայ, ուստի աւելի լաւ խաչեղբայր կը կոչուի այդ անձը շատ գաւառներու մէջ: Իւր դերն է իբր վկայ և խնամակալ կանգնիլ նորաստեղծներուն հանդէպ, հետեւաբար անյարմար է եւ ներքի չէ մատաղ մանուկներու կամ տնաս պատանիներու կամ անփորձ երիտասարդներու յանձնել այդ դերը և անոնց ձեռքը տալ վկայութեան խաչը, և կը հրամայեմք որ նորաստեղծներուն գլուխը խաչ բռնողներ միշտ և առանց բացառութեան չափահաս և փորձառու անձեր լինին:

ԺԱ. Պսակի օրհնութեան Եկեղեցւոյ մէջ կատարուելը՝ որ պարզապէս խորհրդոյն պատուոյն եւ եկեղեցական արարողութեան պահանջքին հետեւանքն է, երբէք նոր ծախուց կամ ծանրութեանց առիթ պէտք չէ լինի: Հարսին և փեսային տեղէ տեղ երթալը բնական մի պայման է, և եկեղեցի հանդիպելին նոր բեռ չաւելցնել: Եկեղեցւոյ համար եւ եկեղեցւոյ պաշտօնէից համար մասնաւոր նուէրներ արգէն իսկ կը տրուին, և եկեղեցի գալով չպիտի աւելնան: Եթէ եկեղեցւոյ մէջ արտասովոր լուսավառութիւն եւ զարդարանք կատարել ուղուի, ծախք մըն է որ ընողին կամքէն կախուած է. բայց եկեղեցին յատուկ ծախք չպիտի պահանջէ և յատուկ հանդերձանքի պարտաւոր չէ: Թող որ եկեղեցական արարողութեան տան մէջ կատարուելը՝ տեսակ տեսակ ծախուց եւ ծանրութեանց պատճառ կը լինէր, որոցմէ այս կերպով ազատ պիտի մնան հարսանեաց տուներ: Պսակի եկողներ եկեղեցի գալիք լինելով պարտաւոր պիտի չըլլան երբէք

հանդիսարաններու յատուկ ծանր զգեստներ եւ զարդեր գործածել, այլ սովորական վայելուչ տարազները բաւական պիտի սեպուին: Յաւարտ արարողութեան շնորհաւորական ողջոյնները կը կատարուին եկեղեցւոյ դրան մօտ, ինչպէս ուրիշ առիթներու մէջ տեղի կունենայ, և միայն մտերիմներ եւ յատկապէս հրաւիրեալներ կրնան փեսային տունը երթալ ընտանեկան համետ ուրախութեան մասնակցելու:

ԺԲ. Հարսանեկան ծախքերը ի հնումն սովորութիւն եղած էր առատութեամբ ընել, բայց այն ատեն կարծես թէ սովորութիւն էր առօրեայ կեանքը շատ չափաւորութեամբ անցնել, և կենաց մէջ անգամ մը չափազանցելը ներեալ կրեւէր: Բայց աշխարհի կենցաղը, ապրելու սովորոյթները, մարդկային ճաշակը, հանգստեան պահանջները, հաճոյց տեսակները՝ հետզհետէ փոփոխութեան կենթարկուին, և նոր ժամանակներու մէջ կարծես թէ սովորական առաւելութիւնները շատնալով, պատահական չափազանցութիւնները կը խափանուին: Այդ տեսութեամբ կը հրաւիրեմք ըստ մեր Սիրեցեալ Ժողովուրդը հրաժարիլ Պսակի առթիւ ամեն չափազանց ծախքերէ և սիրել գեղեցիկ չափաւորութիւնը, որով ոչ միայն խնայողական նշանաւոր օգուտ պիտի ստանան, այլեւ պատահական անհամութիւններէ և անհանգստութիւններէ զերծ պիտի մնան, որով շատ անգամ հարսանեաց մէկ օրուան ծախքով կեանքերնուն մի մասը պարտքի տակ կը բեռնաւորեն, և զանազան ծախող անակընկալներու գիմաց կը դանուին: Հետեւաբար ընդհանուր կերպով կը յանձնարարեմք հարսանեկան հանդէսներէն վերցնել և յատուկ ամեն տեսակ աւելորդ և չաւայ ծախքեր, խրախճաններ, հացկերոյթներ, կրեկոյթներ և նմաններ, և գեղեցիկ պարզութեան օրինակը տալ իւրաքանչիւրը իր աստիճանին համեմատ: Արգէն աչքի առաջ կը տեսնենք թէ ինչպէս ամեն կրթեալ և զարգացեալ ժողովուրդներ իրենց ամուսնութիւնները սկսած են կատարել ամենայն պարզութեամբ, և միշտ իրենց կրօնական տաճարներուն մէջ, և ոչ երբէք անոնցմէ դուրս: Եւ մենք ալ որ ամեն Ս. Խորհուրդները եկեղեցւոյ մէջ կատարելու գեղեցիկ նախանձախնդրութիւնը

ուենինք, մենք մեզի պէտք չէ ներեմք իտրհուրդներէն մէկին համար բացառութիւն ընել և Եկեղեցիէ դուրս կատարել :

ԺԳ. Պսակները եկեղեցւոյ մէջ օրհնելու հրամանը բացարձակ և ընդհանուր լինելով, երբէք այս ու այն պատճառանքներ չպիտի զօրեն բացառիկ արտօնութիւն ստանալ : Պսակներուն եկեղեցւոյ մէջ կատարուիլը իրենց հրապարակային և օրինական պայմանին ալ հաստատութիւնը լինելով, միայն այն ատեն հնար է բացառիկ կերպով և անշուք եղանակով տան մէջ պսակ օրհնելու հրամանը ստանալ, երբոր պսակուելիքներ փորձանաւոր անձեր են : Արդէն մէկ կողմէ Եկեղեցին չսիրեր այնպիսիներուն ընթացքը պատուել սրբավայրին չնորհիւ, և միւս կողմէ իրենք ալ պատճառներ կունենան իրենց գործը հասարակութեան աչքէն ծածկել :

ԺԴ. Պսակի և ամուսնութեան վրայ խօսած ատեննիս, շատ ու շատ կէտեր կային տակաւին՝ զորս կրնայինք յառաջ բերել. և նոյն իսկ արարողական մասէն ալ կէտեր կան՝ որոց վրայ հնար էր դեռ խօսիլ, այլ Մեք ասոնց ամենքը զանց կընեմք այս անգամ, նոր և պատենագոյն առթի թողլով. և ինչ որ գլխաւորաբար ներկայ պաշտօնական կոնգրակոյս կը յանձնարարեմք և կը հրամայեմք՝ Պսակներն Եկեղեցւոյ մէջ օրհնելու կէտն է, ուստի իրական օգտակարութիւններ կսպասեմք, տալով պսակին և ամուսնութեան և ընտանեկան կենաց այն կարեւոր և օգտակար և ցանկալի բարձրութիւնը, ուսկից կարծես թէ կիյնայ, մի կողմանէ կորսնցնելով իւր նուիրական և խորհրդական կերպարանը, և առտնին կատարուող աշխարհական գործողութեան մը ձեւն ստանալով, և միւս կողմէ կը փափագիմք զեզչել և խափանել այն ումպէտ և ձանձրալի ծախքերը, որոց երեսէն շատ անգամ ամուսնական կենաց կազմութիւնը կը յետաձգուի և կարգիլուի :

Ընտանեկան կեանքը մարդկային ընկերութեան ալ կեանքն է, աշխարհի կեանքին հիմն է, սրտի կեանքին աղբիւրն է. ամուսնութիւնը ընկերական կեանքին ալ անհրաժեշտ պայմանն է. մարդկային սեռին պահպանութիւնն է : Զպիտի վարանիմք մինչև իսկ զայն իբր օրինական պար-

տաւորութիւն մը հուշակել, միակ բացառութիւն ընդունելով վանական կենաց նուիրուելու պայմանը : Ո՛չ ապաքէն շատեր ժամանակին չկատարելով զայն՝ տարածամ ձախող ձեռնարկութեանց կալարտաւորուին. և ուրիշներ ալ իրենց հասունացեալ հասակը կենցաղական մխիթարութենէ զրկեալ կը գտնեն : Աներկբայ է որ ամուսնական կեանքն ալ ունի իր ծանրութիւնները, ընտանեաց հոգը, աշխատութեանց բեռը, որդւոց խնամքը, պատահական անհամաձայնութիւններ և նմաններ. սակայն օրէնքը բացառութիւններէ չկազմուիր, մանաւանդ թէ բացառութիւններով կզօրանայ : Ամուսնական կենաց պակասութիւնը մարդուն սուղ ծագործութեան ժամանակէն հուշակուեցաւ թէ «Ո՛չ է բարեք», և ամուսնութիւնը այն ժամանակէն մինչև ցայսօր իբրև անյզլի օրէնք տիրապետեց և գործադրուեցաւ, և այս է զոր և Մեք կուզեմք քաջալերել և յանձնարարել :

Տայր Աստուած որ ընտանեկան կենաց հաճապետական քաղցրութիւնը, և ամուսնական կենաց քրիստոնէական սրբութիւնը, և անական կազմութեան բարոյական մխիթարութիւնը՝ վայելեն միշտ և անխափան երկնային օրհնութեանց լիւրաբեղուն բարիքը, և ինչ որ օրհնեալ տան մը բարիքն է, նոյնը ընդհանրանայ բոլոր տուներու վրայ, և բովանդակ օրհնեալ Ազգիս բարօրութիւնը կազմէ ողորմութեամբ Աստուծոյ Հօր և չնորձօք Փրկչին Միածնի և պարզեւօք Մխիթարիչ Ա. Հոգւոյն, ամէն :

Տուեալ ի Պատրիարքարանիս Կոստանդնուպոլսոյ յամին 1901, ի սկզբն ամսեանն սեպտեմբերի, ընդ 210 բուռնամարտ Կոնդակաց :

ՊԱՏՐԻԱՐԷ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



2767

« Ազգային գրադարան »



NL0029600

2685